

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօյր
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ծանոցման տողը
20 սանդիակ

ԳԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Ե

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրողները եւս
չեն տրոշիր

ԹՐԻԲԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կ. ՊՕԼԻՍ 12 Օգոստոս, (Էթ-Ուէսթի յատուկ թղթակցէն).

Բացի գրամական մեծ և գրկաւոր խնդրէն որ թուրք իշխանութեանց անհանգստութիւն կը պատճառէ—որովհետեւ բնորոշուած է թէ առանց վարայի կարգապահութիւնը եւ պահպանութիւնը անկարելի է, մանաւանդ թուրքի մէջ (°) — կան նաեւ երեք գլխաւոր խնդիրներ որոց խառնակ վիճակը փառնաճիւղն է իր մտերիմ պալատականներուն մեծ վրդովում կը պատճառէ և կարգիւ իրենց ասիական խաղաղ և մեղկ քունը քնանալու:

Այս խնդիրներէն առաջինը որ թուրքի լուրջ մտածումներու մէջ կը գլորէ, կայսրութեան հիւսիսային նահանգներու անվերջանալի խառնակութիւններն ու անկարգութիւններն են: Մակեդոնիան և Ալպանիան Սուլթանի աչքերուն երկու փուշերն են այսօր: Թուրք կառավարութիւնը կը վախնայ—և իր վախը ամուր հիմանց վրայ գրուած լինելու են... — թէ այդ նահանգներու շարունակական անկարգ վիճակը և Պուլկարնու Մակեդոնիոյ մէջ կատարած գերերը, տեղի պիտի տան Մեծ Պետութիւններու միջամտութեան: Եւ արդէն մէկ երկու շաբաթներէ ի վեր դիւանագիտական շրջաններու մէջ այդ ուղղութեամբ շարունակ կը պատրիւ Ս.Ու.Ա.Ն.Յ. ՀԵՐԲՈՒԵ-ԼՈՒ... Թուրքիան սարսափի մէջ է. որովհետեւ կը կարծէ թէ Ալպանո-Մակեդոնական խնդիրը վերջնական և արմատական լուծում մը ստանալու օրուն հասած է...

Պուլկար յեղափոխականներու թուրքիոյ հողը մտնելը, հրոսակաւորներու Մակեդոնիոյ և հիւսիսային միւս գաւառներու մէջ կատարած գործերը, կատարելապէս բաւական են միջամտութեան մը համար, այնպէս որ բնաւ չը պիտի զարմանաք եթէ քիչ ատենէն թուրքիոյ արդի կացութիւնը բոլորովին փոխուի, այս մեծ պետութիւններու առատաստուութեան չնորհիւ:

Թուրք կառավարութիւնը որ չորս տարի իր ներքին գործերու մէջ օտարին միջամտութիւնը տեսնել, այսօր ստիպուած է, կըսեն, իր վնասակար Սուլթանին միջոցով միջամտութիւն մը խնդրելու, որովհետեւ կը տեսնէ թէ անկարելի է ուրիշ կերպով վարուիլ:

Արդէն Մոնասթիրի վիլայէթին մէջ պատահածները մեծապէս վրդաւորած են Կ. Պոլսոյ պաշտօնական շրջանները: Որովհետեւ այդ վիլայէթի ժողովուրդը բոլորովին անտանելի դրութեան մը մէջ կը գտնուի. ներկայ դրութեան մէջ թուրք կառավարութեան խորհուրդներ տալ ու կշտամբանքներ ընելը բաւական չեն կրնար լինել այլեւս: Մոնասթիրի մէջ անցած դարձածներէն յետոյ թուրք վարչակարգը վրդովումն ալ, պարզ կերպով կը ցուցնէ թէ Պետութեանց միջամտութիւնը անհրաժեշտ է և այդ ալ կը համարուի: Որովհետեւ յայտնի է թէ, վրդովումի մարդասերները մեզ չեն վարժեցուցած հաստատու թէ իրենց վրդովումն ու իրարանցումը առաջ կուգայ, ճշունտներու և հալածանքներու համար իրենց ունեցած համակրութեան (°) ... — Սուլթանը՝ երկու թիւներուն լուրջ առնելուն պէս՝ շտապով մասնախումբ մը կազմել տուաւ Մեծ-Վէզիրին նախագահութեան տակ, որն անմիջապէս և խիստ միջոցներու պիտի դիմէ... որովհետեւ Սուլթանը հասկցիր է թէ Մոնասթիրի մէջ պատահածները նախաբաններն են ուրիշ շատ մը երկու թիւներուն՝ շատ աւելի կարեւոր և ծանր, որքան իր պիտի ունենան Պուլկար գոմիթներու երկու հարիւր գործիչներու ձեռքով որոնք դեռ նոր մտան Մակեդոնիա:

Երկրորդ խնդիրը, որ նուազ կարեւոր չէ թուրքիոյ համար, Պուլկարիոյ անկախ թագաւորութիւն հռչակուիլն է: Մէկէ աւելի անգամներ այս լուրը տարածուեցաւ և հերքուեցաւ. բայց այսօր հռչակուելով զանազան դիւանագիտական շրջաններէ և նոյնիքն Ֆերիսնանտ իշխանէն, այդ լուրը մտածել կուտայ թէ այդ խնդիրը արդէն ուսումնասիրուած է և շատ

հաւանականութիւն կայ որ այս անգամ իրականանայ առանց վիճելու: Թուրք կառավարութիւնը հակառակ խաղաղութիւնը պահպանելու նախ Ուլուս պետութեան հետ ունեցած համաձայնութեան, սկսած է արդէն կասկածիլ հարկատու իշխանութեան (Պուլկարիոյ) պաշտպան պետութեան (Ռուսիոյ) վրայ: Սուլթանը կը կարծէ թէ ռուս կառավարութիւնը յարմար առիթը կը փնտռէ իր պաշտպանելու իշխանութեան կատարելու անկախութիւնը հռչակելու: Բայց առիթներ կան զորս առաջ բերելը կամ ստիպելը դիւրին չէ, բայց անգամ մը որ ներկայանայ խելօք մարդիկը անկէ կօշտուին, Սէն Բէրդարիկի դիւանագետները, ուրիշներու չափ գիտեն օգտուիլ առիթէն:

Երրորդ խնդիրը որ Սուլթանի և իր շրջապատներուն մտքի պայծառութիւնը կը խռովէ, այն դաւադրութիւններու յաճախակի երկուսն է, որոնք միշտ Սուլթանի անգին կինաց դէմ ուղղուած են (°): Ումէն տեղ, աչքերին ուր որ դարձնեն, դաւադրութիւններ կը գտնեն (°) որոնք բարեալաբար՝ Սուլթանի և կայսրութեան փրկութեան համար, միշտ կը վիճին կամ ծննդուն պէս կը խղզուին (°): Ուր դաւադրութիւններու հոգիներն են երկուստեք թուրքերը (°): Իշխանութեան մէջ գոնուողներու նոյնպէս օրմանցի ժողովուրդին մեծամասնութեան զաղափարն այն է թէ երկուստեք թուրքերու գաղափարը կոյսրութեան քակտման պատճառ պիտի լինի և առաջ պիտի բերէ միեւնոյն հեռանկար քան ինչ որ պիտի պատահէր Ռուս կայսրութեան մէջ եթէ այնտեղ կատարեալ ազատութիւն լինէր:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

Բարիկ, 16 Օգոստոս

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Ա.

ԽՈՁԻԳՈՂԻ ԱՆՑԵԱԼԸ

(Շար. նախորդ քիւռն)

Անցեալ տարի այս էջերուն մէջ մեր «Բաց նամակ»ին հրատարակուելէն վերջ մեր բարեկամներէն շատերը հետաքրքրուած մնալէ պահանջեցին մանրամասն հրատարակել եւ պարզել «Բաց նամակ»ի մուկ մնացած կէտերը, եւ այդ անհիշ զիջմանց գլխաւոր դերակատարները մերկապարանոց ընել ու իրենց իրաւունքները հրաշքէ կերպով խաբակել այդ փճացած մարդուկներու ճակտին: Մեր բարեկամաց պահանջին հանգէպ բնականաբար մենք պէտք չէր լռէինք եւ իրենց պահանջն անկարեւոր սեպէինք: Թէեւ ցաւալի եւ տխուր գեր մը պիտի ստանձնէինք, բայց ինչ որ ալ ըլլար՝ քանի որ խնդիրը անձնական չէր՝ այլ հանրային եւ կենսական էր ու լոկ մեր բազմատանջ եւ թշուառ ժողովուրդի շահերուն կը վերաբերէր, ուրեմն պէտք էր սիրով յանձն առնէինք այդ մերկացումն ընելու՝ ոչ թէ գործ մը կամ ծառայութիւն մը ընելու ստանդարտութեամբ, այլ լոկ անհատական պարտականութիւնս կատարելու նպատակաւ:

Ծնորակալ եւ որ Իրաւունքի խմբագիր Տ. Գուրպէթեան հանցեալ ժամանակի մը համար Իրաւունքի քանի մը սիւնակները մեզ տրամադրելի ընել, եւ մենք սկսեցինք «Յանցանքը որուն է» խորագրով հրատարակել: Բայց այն ատենուան Իրաւունքի պատասխանատու Տ. Տօքթ. Վարդանեան երկրորդ անգամին համար չը թոյլատրէր շարունակել եւ մենք ստիպուալ ընդհանրեցինք մեր սոյն հրատարակութիւնը: Վերջէն մեզ այնպէս կարծի տուին թէ, Վարդոյի բարեկամները Տ. Տօքթ. Վարդանեանէն խնդրած են որ հրատարակել չը թոյլատրէ, ըսելով՝ «Եթէ թոյլատրէք՝ այդ հրատարակութեամբ Վարդոն բարոյապէս պիտի մեռնի»:

Իսկ գալով Վարդոյ ցնդածին, այդ օրէն սկսեալ անամօթութեան լաջակ մը գլուխն առած, չը նայելով որ ինքը խաղաղութեան ծանր տագնապին տակ կը տքայ, չը նայելով որ ստանակներու չափ չը գիտեր պատիւ եւ արժանապատուութիւն ըստածի իմաստը, չը նայելով որ անբարոյականութեան տիգրիս մէջ չաղախուած է, եւ վերջապէս չը նայելով որ կատարելապէս ցնդած եւ ապուշ մը դարձած

է, մեր այդ հրատարակութեան ձեռնարկած օրէն ի վեր իր փայտավազ միջոցներ վրայ (նմանապէս պարկեշտ եւ ազնիւ անհատներու) յարձակած ու մրոտել ջանացած է, (թէ եւ երբեմն ալ ճիշդ խոցերու նման իր փայտեքները կլլած) իրեն միակ նպատակ ունենալով մեզմէ վրէժ լուծել:

Մենք ի հարկ է իր սուտ ու զրպարսիջ մրոտունքներու կարեւորութիւն պիտի տայինք եւ օրը օրին պիտի գրէինք, եթէ երբեք ինքը ինչպէս շատ շատերու եւ նմանապէս մեզ համար ԲԱՐՈՅԱՊԷՍ ՄԵՌԱՄ եւ բառին բովանդակ նշանակութեամբ կատարեալ ՍՐԻԿԱՅ մը չըլլար:

...

Թէպէտ եւ վարդօ թշուառի մասին գրածն իր ամբողջ կենսագրական պէտք էր ըլլար, բայց կը ցաւիք ըսելու որ մենք սպասուած ինչ չափ չը պիտի կարողանանք գոհացում տալ մեր ազնիւ ընթերցողաց: Որովհետեւ չենք գիտեր ո՞ր ծնած է, որո՞ք են իր ծնողքը եւ թէ ի՞նչ է իր բուն անունը, բայց կարծեմ մեզ այնչափ չը պիտի հետաքրքրէ իր հայրենիքը, ծնողքը եւ անունը, թերեւս նա ընկեցիկ մըն է եւ հաւանական է հրէայ, որովհետեւ որոնք որ իր դէմքը տեսնելու դժբաղդութիւնն ունենան բնաւ չը պիտի վարանին հրէայ կարծելու: Եւ արդէն երբեմն ալ այդ ցեղի յատուկ «Իսաք Արվախի» անունով ապրած է:

Մենք հաւանական կը գտնենք եւ այնպէս համոզուած ենք թէ, այդ թշուառը իր հայրենիքը եւ ծնողքը ծածուկ պահելով, կուգէ ծածկել իր հայրենիքին մէջ իր ի՞նչ բարի պատու մը եղած ըլլալը:

Պէտք չունինք իր հայրենիքով եւ ծնողքով հետաքրքրուելու, քանի որ մենք մեր այս հրատարակութեամբ եւ օրինաւոր փաստերով ու իր գրաւոր խոստովանութեամբ զինքը պիտի ցուցնենք անառակ, յորք, ստախոս, խաբարայ, բաղդատար, շարքաւ եւ զեղծմարտ, ուրեմն այս բոլոր տիպոսները կրող մեր «Վարդ-Պատրիկով» — «Իսաք-Արվախի» —

«Վարդ»-ի վերջնական եւ զրոյժուած տիպոսն կը ըլլայ խաչագող, բարոյապէս մեռած եւ փնացած: Ուրեմն պէտք է որչափ որ կարելի է մանրամասնօրէն պարզենք թէ՛ ի՞նչ պարագաներու մէջ այս թշուառ արժանացած է վերոյիշեալ փառաւոր տիպոսներուն:

Յ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

(Շարունակելի)

ՌՈՒՍ ՄԱՍՈՒԼԸ

Ա.

(Շար. նախ. քիւնէն)

Այժմ կը հասկցուի թէ ուսուցչատեղան աշխարհի մէջ մամուլը թշուառներ չունի, իշխանական ամենաչին հեղինակութիւնն ունեցող անհատն իսկ ինքզինքը ընկիւք կամ ըրած գեղծութիւններու յայտնուելուն հարուածին տակ կը զգայ: Հետեւապէս խմբագիրները երբեմն իրական վտանգներու ենթակայ են Ահա, զոր օրինակ, գեղ. վերջերս Թուրքիստանի մէջ ինչ անցաւ:

Քաղաքագործի սպաններէն մին սովորութիւն ունէր իր կինը տանելու, որը ճարտար Տ. ընտանիքին ապաստանեցաւ: Այս դէպքը դատի մը տեղի տուաւ, Տարաբաղը կինը իր շահերուն պաշտպանութիւնը յանձնեց Սմոկուր կոչուած փաստաբանի մը որ միանգամայն թուրքիստան Ռիշու թիւթիին խմբագրապետն էր: Հոս, պարտինք փակագիծ մը բանալ: Քանի տարիէ ի վեր ուսուսպաները շատ բժախիդիք են իրենց գինուորական պատուի մասին, կամ ինչպէս հոգ կըսեն իրենց «պատմութեան պատուին» վրայ: Այժմ այդ շիջանակի մէջ մահահոգութեան մարտնչելու ճշմարիտ հա-

մաճարակ մը կայ: Առդ, դաւաճարութեան ատեն Տ. սապարեւորութիւնը արտասանեց «ցե. բեկ» տեն պատմանք, սպանները իրենց նախախաչով ձիերն կը մտրակեն, գիշերը կիներին մտրակելու զայն կը գործածեն: Այս բառերուն, դատարարն զտնուող, Ս. անունով մէկ սպայի մը պատմութեան պատիւը ստատիկ վերջ մը ստացաւ: Հետեւեալ օրը փութաց, նախախաչ ձիերը Սմոկուրէն այդ խօսքերուն համար հաշիւ պահանջելու: Վերջինը այդպիսի պարբերութիւն մը արտասանած չըլլալը անոր յայտարարեց, մնաց որ նախագահը պիտի չը թողարկէր որ անանկ բան մը բնէ: Հակառակ այս բացատրութեան Սմոկուրի վրայ ինկաւ, իր նախախաչով զայն լաւ մը ծեծեց եւ մեկնեցաւ մահ սպանալով անոր եթէ այս յարձակումը թերթին մէջ չը հրատարակելու հրամանին չանսար: Սմոկուր անմիջապէս ընդհանուր կառավարչին հեռագրեց որ քաղքէն բացակայ էր: Եւստի իր վրայ գործուած ոճրին վրայ յօդուած մը գրեց ու սովորութեան համեմատ, փորձը գործնելիքն ու քաղքին զինուորական կառավարչին զրկեց: Փրօքնիլը յօդուածը գծեց: Բայց Ս. նորէն խնդրոյն ծանօթացաւ կառավարչին զրկուած փորձէն, որը զայն անոր ցոյց տուած էր: Կատարած, Սմոկուրը փնտռելու համար դատարան վաղեց ուր խիստ մօտէն բաշխուած ռէվօլվերի հարուածներով զայն սպանեց: Ընդհանուր կառավարիչը, Սմոկուրները հեռագրի ընդունելուն, հրահանգ տուելու է իրեն ծառայող սպային Ս. ի հեռագրելու որպէս զի մինչեւ իրեն քաղաք վերադառնալը հանդարտ կենայ: այդ դժբաղ-

դապէս այդ հրամանը շատ ուշ եղաւ: Ս. ընդհանուր կառավարիչին հեռագրին իբր պատասխան սա հեռագիրը անոր ուղղելու կարող եղաւ: «Պատմութեան պատիւը պաշտպանելով, Սմոկուրն էր սպաննեցի»:

Բանալ, Ս. իր վիճակին վրայ ազուր ասպանութիւն մը ցոյց տուաւ: «Կայսրը ինձ պիտի ներէ» յաճախ կը կրկնէր: Բնաւ չէր սխալէր: Իր սպանութեան համար, երկամեայ բանտարկութեան դատաւարտուեցաւ, բայց առաջին տարին չը լմնցած ազատ թողուեցաւ: Մնաց որ զարմանալու բան չը կայ: սպաննածը շատ շատ պարզ խմբագիր մըն էր:

Թարգմ. «Ռուսիա Տե Ռուսիա» (Վերջ Ա. մասի)

ԳՈՍԹԱՆՑԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Պատուարժան թերթիդ սինակներուն մէջ բազմիցս ձեռնարկուած է Ռուսահայուն մեղկութիւնն ու անտարբերութիւնը առ իր նկեղեցին, իր ազգն եւ իր վարժարանն. սակայն ինչպէս որ պարտք եւ իրաւունք հաւասարապէս յարգուելուն մէջ կը կայանայ ամեն ներդաշնակութիւն, ահա այդ արդար օրինաց յարգումն է որ կը մղէ զիս հրապարակել Ռուսահայոց ֆոսթանցա քաղաքի աղգայնոց զգայուն եւ սիրտ ջանքը վերաբերումն առ իրենց նկեղեցին եւ վարժարանն: Իբր ականատես զիայ կուգամ շնորհաւորել հրապարակաւ եւ այն՝ ոչ այլ ինչ նկատողութեամբ, այլ միայն այն ըզձէլ թէ՛ թերեւս ալ աւելի բազմաձայն եւ նկեղեցապատկան կալուածներով եւ հասոյթաբեր աղբիւրներով պարարտաց-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(4)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՐՎԻՃ...

Լուծիքի աղա ժամացոյցը նայեցաւ: Արդարեւ, քառորդէ մը աւելի անցած էր՝ որոշեալ ժամանակէն:

Ուստի առաջարկեց տէրվիչին՝ որ ընկերանար իրեն:

— Երթա՛նք թիարանը... ըսաւ համակրական չեչնով մը:

Տէրվիչը ցնցուեցաւ:

Ներքին ուրախութիւն մը փայլեցաւ անոր աչքերուն մէջ:

Ի՞նչ անցաւ իր հոգիէն... Ի՞նչ մտածեց:

Աստուած գիտէ՛:

Լուծիքի աղայի հետ ուղակի բերդին յետնակողմը տարածուող ապստամբները յառաջացաւ: Հեռուէն ջախջախուած քարերու ձայնը կը լսուէին...

— Ի՞նչ ձայն է այս, հարցուց տէրվիչը՝ բոլորովին անգիտակից ձեւացնելով ինքզինքը:

Լուծիքի աղա ժպտեցաւ: Յետոյ տէրվիչին ձեռքը

բռնելով անուշ րացատրութեամբ մը ըսաւ: — Այս ձայնը ջախջախուած քարերու ձայնն է: հիմակ կը տեսնես:

Տէրվիչը լռեց:

Երկուքն ալ քով քովի յառաջանալով հասան միջնաւայն տեղին, ուր կալանաւորները խուճախուած բաժնուած կաշխատէին:

Օ՛հ, տխուր էր այդ անսարանը...

Թիապարտութեան անիծեալ սեւ շապիկը տէրվիչին սիրտը լեցուց այնպիսի՝ ցաւ մը, որ զգացումի մը լուծանքով ցնցումն եղաւ իր հոգեոյն...

Նայեցա՛ւ այդ տաժանակիր աշխատութեան դաւաճարտուած լքեալներու վրայ, որոնք կիզիչ առեւտր տակ, արիւն քրտինք մտած՝ կը զբաղէին...

Նայեցա՛ւ, այո՛, խորունկ, ցաւաւոր ռանհոնէն կսկծանքով մը նայեցա՛ւ... ու չկրքաւ զսպել իր արցունքները...

— Ասոնք թիապարտներ են, տէրվիչ, ըսաւ Լուծիքի աղա որ չկրահեց անոր հոգեկան դրութիւնը:

Դե՛ն մաս մըն ալ բերդին յետնակողմը կը գտնուէին:

— Թիապարտ... բայց ի՞նչ ըսել է թիապարտը, նկատել տուաւ տէրվիչը՝ խզողած ձայնով մը:

— Թիապարտներու վրայ գաղափար չունի՛ս:

— Ամենեւին:

— Խիստ լա՛ւ. ուրեմն ըսեմ քեզի թէ ասոնք ոճրագործներ, աւազակներ, խռովարարներ ու երկրին օրինաց հակառակ վարուող մարդիկ են...

Կառավարութիւնը պատիժներ սահմանած է իրենց... կան որ ցմահ հոս մնալու դատաւարտուած են, կան որ տասը, քսան, առնուազն հինգ տարի պիտի սպասեն...

Առաւօտ աշխատե-

լու կուգան, իսկ երեկոյ տեղերին կը վերադառնան: Ահա՛ ասոնց կեանքը: Կր տեսնես, ոմանց ոտքերէն երկայն շղթայ մը անցուած է, որմէ կախուած է անագին ծանրութեամբ երկաթէ գունդ մը:

Ատիկա ուրիշ բանի համար չէ, եթէ ո՛չ ապահովութիւն մըն է, որպէս զի փախուստի միջոցներու վրայ չխորհի:

Տէրվիչը մտիկ կընէր:

Մոլորագին նայուածքը շարունակ մէկ լքեալին վրայէն դէպի միւս լքեալը կը պտտուէր:

Լուծիքի աղա յառաջացաւ:

Տէրվիչը՝ բոլորովին ինքիւնէն ելած դրութեան մը մէջ՝ հետեւեցաւ Լուծիքի աղային, որ բնաւ ուշադրութիւն չէր ըրած անոր այլալեւու երեւոյթ ունեցող կերպարանքին:

Թեոուտ ապառաժին տակ ութը հոգի կային:

Ասոնք ալ քար կտրելու կը զբաղէին:

Տէրվիչը կանգ առաւ... կեցած տեղը կարծես կայծակ մը իջաւ գլխուն ու չկրցաւ քայլ մը փոխել:

Օ՛հ, աշխարհը միջոցաւ... հոգեոյն ամբողջ արամազրութիւնը խղճուեցաւ այդ պահուն:

Իր աչքը յառեց երիտասարդի մը վրայ, որ խոչոր մուրճը քարերուն կը զարնէր...

Այդ երիտասարդը վաճակաւն էր:

— Եթէ սիրածս մէկը կայ այս թշուառականներուն մէջ, ըսաւ Լուծիքի աղա տէրվիչին կամաց ձայնով մը, ատիկա սա՛ երիտասարդն է:

— Ո՞րը... հարցուց տէրվիչը:

— Զիշը մէջ տեղը գտնուող երիտասարդը, նկա-

եալ քաղաքներու ազգայինք գէթ արժանապատիւն ունի նախանձախնդրութեամբ հետեւին նմանող լինել քիչ անց օրնակ մերայնոցս :

Քոսթանցայի գաղթականութիւնը ըստ աւանդութեան բաւական հին կը համարուի , թէեւ այս մասին մի որոշ արձանագրութիւն չը գտնուիր . սակայն մեզ անծանօթ պատճառներով դժբաղդաբար եկեղեցին այսօր և ոչ երբէք մէկ սանթրիոն հաստատ եկամուտ մը չէ ունեցած , և ցայժմ պաշտօնավարող մարմիններն կերելի թէ հետամուտ եղած են միայն եկեղեցին բաց պահել պաշտօնավարող է քահանայով մը , և այն ուղի ժողովրդեան հոգեւոր պիտոյիցը իբր մատակարար . իսկ վարժարանի մասին և ազգային մանկատանն ըստ արժանւոյն հոգատարութիւնն ինչ ինչ պարագայիք նկատի չէ առնուած կերելու : Սակայն արդարութիւնը կը պահանջէ անտանօր խոստովանել թէ ժողովրդեան արդեամբ աստի իբր եօթը տարի առաջ տղանք և յաջորդած իսկ են ըստ բաւականի հաւեստ չէնք մը կառուցանել եկեղեցւոյ յարակից , որը կը բաղկանայ չորս դասարանէ , բողոքացեալ նախակրթարանէ մը , ընթերցարան-լսարանի ծառայող ընդարձակ սրահէ մը և քահանայի ու ժամկոչի բնակութեան յատկացեալ մասերէ եւ այլն :

Արդարեւ կերելու թէ քոսթանցայի հայ բնակչութիւնը մի քանի տարիներէ ի վեր զարթած է իր թմրութենէն , սակայն սա եւս ճիշդ է ըսել թէ վերջնութեւն տաւրինեալ գաղթականութիւնն մեծ դեր ունեցած է սոյն զարթոյցման և օր աւուր լաւագոյն վիճակի բարձրանալու վրայ է թէ՛ դպրոցը և թէ՛ այլ բարենպաստակ հաստատութիւններ . նա մանաւանդ շնոր-

հաւորութեան արժանի է արդի վարչութեան պատուարժան անդամոց փութկոտ ջանքն քանի որ օրինաւոր միջոցներով նախակրթարանի մը հաստատ վիճակը ձեռք բերելով հանդերձ , այսօր ամենայն կանոնաւորութեամբ 80-90 երկսեռ ուսանողաց ստուար թուով մը և չորս դասարանի համեստ ծրագրով մը կրթական իրենց վարժարանն տարեկան մօտաւորապէս 8,000 ֆրանք պիտոճեով մը : Եւ այս ծախքը ո՛րքէ կը հոգացուի գիտես սիրելի ընթերցող , միայն և միայն քոսթանցայի փոքրամիւլ գաղութին ամսական կամ տարեկան տուրքով , և այսօր իրաւամբ կրնայ պարծիլ Պատ. հոգաբարձութիւնը , քանի որ իր վարժարանի չորս կարեւոր պաշտօնէից և նոյնիսկ հրապարակին վրայ մէկ սանթրիոն պարտք չունենալով հանդերձ , թերեւս 4-500 ֆրանք պատրաստ դրամ ունի , առիկա ալ ոչ այլով ի՞նչ ալ հոգաբարձութեան անգամաց անխնայ ջանքից և բարեացակամ հոգատարութեան արդեանց շնորհիւ , ապրիլն թէ՛ տեղային ազգային մանկուոյն օգտակար ըլլալու և թէ՛ օրինակի և տիպար հանգիստնալու իրենց երկրի ուրիշ քաղաքացի ազգայնոց : Անշուշտ տեղւոյն Արժանաշնորհ քահանային հայրական յորդորներն եւս սոյն բարի արդեանց մէջ տրամադրելի գերեւր ունեցած են . յիշատակութեան արժանի է եւս աստ պատուարժան երկուց զաստուաց անխնայ ջանքն որք ամենայն սիրով յանձն առած են իրենց պաշտօնէ դուրս գործեր եւս , բաւական է որ ըլլան անոնք ազգին օգտակար և բարեաց նպատակայարմար :

Արդ հրապարակաւ ներկայացնելով իմ սոյն անձամբ անձին զգա-

ցած ներքին համոզումս , կը շնորհաւորեմ զիրենք և կար ու զօրութիւն կը մաղթեմ անոնց յարատեւելու իրենց ազգօգուտ պաշտօնն , վստահ ըլլալով որ երբէք անպսակ և անվարձ չեն մնար հանրութեան օգտակար աշխատութիւններն :

Անցորդ մը

ՀԱՐՑՈՒՄ ՍԸ

Պարկազի Թաղ . Խորհրդի անդամ՝ առ Տ . Տ . Մ . Թորիկեան և Մ . Մարտիկեան

Իբրեւ ազգային գիտակից անհատ կը փութամ ներկայ երկողով հարցնել ձերդ մեծապատուութեան թէ՛ տեղւոյն ծխախոտի պատուար վաճառեալներէն . . . Տ . Վահան Ծահնագարեանի իր ամուսնէն մի քանի տարիներէ ի վեր բաժան ապրող քրոջ՝ Տիկին Գալինիկի վերջիւս աշխարհ բերած երախտն որո՞ւ կը պատկանի , և հետեւաբար ի՞նչ անուան տակ պիտի մկրտուի : Իբրեւ հարգաւթ թէ . . .

Ձեզի շուրջ 15 օր ժամանակամիջոց կուտամ : Մինչեւ այն ատեն եթէ երբէք չպատասխանէք , վերջնականապէս որոշած եմ ընելիքս :

Օմնիկ Սահակեան

Պարկազ . 9 Օգոստոս 1902

ԼՁԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարնեցի 150 ազգայիններ հանրագրութիւն մը մտաւարանելով Առաջնորդին , յայտնեցին թէ չեն ընդունիր ազգային չէնքի մը վերաբերեալ Սանատարեան վարժարանի վարձու տրուելը : Մինչդեռ ուրիշ գաւառներու ազգայինք թախանձագին կը խնդրեն որ Սանատարեան իրենց գաւառին մէջ հաստատուի , որպէս զի իրենց գաւառ-

ները կարենան օգտուիլ անկէ : Սակայն կարնեցիք , կերելու թէ , տանեակ տարիներու փորձառութեամբ , մեծ օգուտ մը չեն ակընկալեր այդ հոյակապ հաստատութենէն , որ ճշմարտը ըսելու համար , իր անուան արժանի արդիւնք ցարդ չը կրցաւ ցոյց տալ :

— Յուշերը իրենց կարնոյ դպրոցները փակած ու մեկնած են :

— Յիշուէ մեզ կը գրին . « Տեղւոյն Տ . Սարգիս Սահակեան քահանան վախճանեցաւ անցեալ օր (27 Յուլիս) գիշեր և հետեւեալ օր հոս թաղուեցաւ : Ինք շատ օղի կը խմէր և օղին կերաւ զինքը : Յուշարկաւորութեամբ գրեթէ մարդ չը կար : Իր ընթացքին պատճառաւ ժողովուրդին համակրութիւնը չէր կրցեր գրաւել » :

— Բազէշի առաջիկ . փոխանորդը Պատրիարքարան զրկած է իրենց ամուսիններէն լքեալ կիներու ցանկ մը և խնդրած է անոնց անմխիթար վիճակին դարման տանիլ :

— Կովկասի հայ վարժարաններուն կառավարութեան կողմէ փակուելէն յետոյ , Պաքուի հայերը թեմական մեծ վարժարան մը հիմնելու նպատակաւ հանգանակութեան ձեռնարկած և շուտով 300 հազար ռուպլի հաւաքած էին : Բայց կառավարութիւնը չթոյլադրեց նոր թեմական դպրոց մը աւելցնել , քանի որ ըստ Պալատիկեան օրէնքին մէն մի առաջնորդութիւն միայն մէկ թեմական դպրանոց կրնար ունենալ , որ ուղղակի Ս. Էջմիածնայ իշխանութեան ներքեւ գտնուելու է : Այս արգելքին վրայ Պաքուցիք հաւաքուած դրամին մէկ մասը ետ դարձուցին : Իսկ մնացեալը պիտի գործածուի վեհաբանին վերաշինութեան :

— Մասնաւոր նամակներէ ուրա-

սեղ տուաւ Լուսինի աղա՝ մատնանիլ ընելով վանականը :
— Ի՞նչ ազգ է :
— Քրիստոնեայ է . . . :
— Քրիստոնեայ :
— Այո՛ . . . բայց բարի ու չափազանց խոնարհ մէկը կերելի : Չորս տարի է որ այս բերդին մէջ կը գտնուի . . . այդ չորս տարուան մէջ գանգատ մը չլսեցի իր վրայօք :
— Ոճրագործ է :
— Դատաւարութեան պաշտօնական տեղեկագրին մէջ այդպէս նշանակուած է :
— Որչա՞փ ատեն պիտի մնայ :
— Դժբաղդաբար՝ մինչեւ ցմահ :
Տէրվիշը հաւաքանք մը հանեց սրտէն :
— Երթա՛նք . . . ա՛յ չեմ ուզեր կենսւ հոս , մի մնջեց տէրվիշը :
Լուսինի աղա չպնդեց :
Դարձեալ պաշտօնատեղը վերադարձան :
— Ո՛հ , բարի՛ տէրվիշ , ըսաւ Լուսինի աղա , անշուշտ ցաւեցար այդ թշուառականներու վրայ , անանկ չէ՞ :
— Ձեմ գիտե՛ր . . . չեմ գիտեր . . . մըմնջեց տէրվիշը կակաղելով : Իցի՛ւ թէ ոտքս չընէի այնտեղ : Դիմանալու բան չէ :
— Ի՞նչ պատճառաւ . . . միթէ՞ յանցապարտ մը պէտք չէ որ պատժուի , պէտք չէ որ կեանքէ զրկուի : Ենթադրենք թէ չըլլային այս թիարաններն , ի՞նչպէս կարող ենք չարագործութիւնները դադարեցնելու :
Տէրվիշը դառնութեամբ մը Լուսինի աղայի աչքը-

րուն մէջ նայեցաւ ու ըսաւ .
— Իրա՛ւ ես . . . պատիժը սահմանուած է չարագործի մը համար : միայն թէ՛ դատաւարանաւ մը կենաց իրաւունքէն զրկելը խցի՛ դէմ է . . . Կառավարութիւն մը , որուն գաւառները կը տառապին այս գոթխային վայրերուն մէջ , ըստ իս , արդարաւանաւ բան մը չունի . . . :
Լուսինի աղա սակմայ սարսուռ մը զգաց : Տէրվիշը գրեթէ կը մոռնար որ պաշտօնատեղն մը մէջ կը գտնուէր , կը մոռնար որ այդքա՛ն համարձակօրէն նախատելը կը վրդովեցունէր զինքը :
— Յուշուած ես , տէրվիշ , նկատել տուաւ Լուսինի աղա հանդարդ բայց խորհրդաւոր չիշտով մը : Ու մարդ մը , բնական է , իր յուզուած վայրկեաններու մէջ երբեմն կը մոռնայ իր ըսելիքները , այնպէս չէ՞ :
— Կը հասկնամ թէ ի՞նչ ըսել կուզես , պէ՛յս , ընդհատեց տէրվիշը : Բայց կարող եմ ամեն կերպով ապացուցանելու թէ կառավարութիւններ կան , որոնք չունին թիարաններ , չունին այս տեսակ տեղեր . . . միեւնոյն ատեն ոճրագործութիւնը նուազ կը կատարուի իրենց մէջ : Կը հաւատամ որ մարդիկ բռնութեան ներքեւ մի միայն ոճիրներ կը յղանան . . . կը հաւատամ որ քու կալանաւորներդ մարդ ըլլալէ զազարած են , ու այսօր ամենէ՛ն կատաղի գազան մը չկրնար գործադրել իր բուրբ ուժովը , ինչ որ՝ անոնք պիտի յաջողին մտածելով : Մանաւանդ , ի՞նչ կը յուսաս որ ըլլան ատոնք . . . իրեք՞ մարդ պիտի կրեն իրենց պատիժը , եթէ ո՛չ իբրեւ ամենակատաղի գազան մը :
— Շատ աղէկ , բարի տէրվիշ , ի՞նչ կուզես որ

ըլլան այդ մարդիկ : Երբ երկրին օրինաց հակառակ՝ խռովութեանց , չարագործութեանց ու տեսակ տեսակ անկարգութեանց տեղի կուտան , կառավարութիւնն ի՞նչ միջոցներ ձեռք առնելու իրաւունք կրնայ ունենալ : Բնական է , պատիժ մը պէտք է . . . :
Տէրվիշը խորին դառնութեամբ մը գլուխը ծակեց ու չուզեց պատասխանել : Յայտնի կերեւար որ հոգեկան ճնշումի մը ներքեւ կը գտնուէր , յայտնի կերեւար որ խորհրդաւոր գաղափար մը կը գառնար իր գանկին տակ , մէկ խօսքով՝ յայտնի կերեւար որ իր էութիւնը կը լեցուէր եւ յորդեղու աստիճան կը փոփոխէր : Կարծես թէ բառ մը կը ջանար գտնելու , որ կարենար բացատրութիւն մը տալ . . . ու այդ միակ բառը չէր յիշեր , չէր մտաբերեր :
— Այնպէս չէ՞ , տէրվիշ , յարեց Լուսինի աղա՝ որ վայրկեան մը լռած էր ու կը սպասէր պատասխանի մը : Միթէ՞ մեղադրելի կը գտնես կառավարութիւն մը , որ յանցաւորին ոտքը չղթայ կանցունէ :
— Ո՛հ , պէ՛յս , ո՛չ . . . այդ մասին առարկելու բան մը չունիմ , ընդհատեց տէրվիշը ճիգ մը ընելով ինքնիւ վրայ : Միայն թէ՛ այս տեսակ վայրերու մէջ՝ կեանքը փճացող մարդեր , երբ օր մը ազատուին , սոսկալի գազաններ պիտի դառնան . . . ես ա՛յս կըսեմ :

(Շարունակելի)

խուլութեամբ կը տեղեկանանք թէ մեր համակրելի բարեկամը, Տօք. Ս. Թահմասեան, որ իր խանդարեալ առողջութեանը պատճառաւ ստիպուած էր ասկէ մեկնել և Եգիպտոս բնակիլ, բոլորովին ապաքինած է և սկսած է ի գործ դնել իր բժշկական արհեստը, որուն մէջ ունեցած հմտութիւնը ու փորձառութիւնը արդէն գնահատուած է իր պաշտօնավարած քաղաքներէն մէկը և մանաւանդ Սօփիայի բժշկական կոմսիտէն:

Տ. Տօք. Ս. Թահմասեան այժմ հաստատուած է Գահրէ Շարա-Ապտիւլ-Աղիգի Օսմանիէ գեղարանին ճիշդ դէմը:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սխանագրութեան Օգոստոս 18 թաւիտի աթիտէքի թէկէկրաֆ ալընը տրը:

«Պապը Ալի Օրմանեան Պատրիարքըն իսթիֆասընը գապուլ իթմէտի: Պատրիարքըն իսթիֆասընը կերի ալըրմագ իշիւն էզ հեր ճիհէթ չալըշըյօր վէ էր: մէնիլըէ գարըն իսթիմալ օլընան չէտիտ թէտպիլըէր լաղվ իթմէք վատընտա պուլըշըյօր: Պատրիարք հիւքիւմէթին վատարընը քիֆայէթսիզ կէօրիւպ ըտտ իթտի, վէ գաղի թէմիւնթ թալէպ իտէյօր»:

— Բուս Գարատէնիզ տօնան մասը 10 կիւն թիւրքիա իլիման: Լարընը կէգտիքտէն սօնրա, Տրապիզօնտան տօղրու Պաթուճա ալ: տէթ իթմիշ օլտըղը պա թէկէկրաֆ պիտիլըիւմիշ տիր:

ՄԱՔԷԹՈՆԻԱ ԿՕՆԿՐԷՍԻ

Սօփիատան Օգոստ. 17 թարիխէ չու թէկէկրաֆ վերիւմիշ տիր:

«Էվլէտէն հըս օլընտըղը իւզըն, Մաքէթոնիա գօնկրէսի իքի գըսմա թագսիմ օլընտը: պիր գըսմը Միքայիլովսքի վէ ժէնէրալ Ջօնչէվ թարաֆտարարը, տիկերի Պօրիս Սարաֆով բարթիզանլարը օլուպ, էվլէրիտէ 30 վէ իքին: ճիտէ 60 մուրախա մէվճուտ տրը: Ջօնչէվիսթընը պիր պուկար Մաքէթոնիա» թէշքիլիւն վէ Սարաֆովիսթընը «Մաքէթոնիայա օլթօ նօմի» վերիւմէսինէ արգուքէշ տիր: Էնը:

«Վիւքէլա ըշիսի Մ. Տանէվ չալըշտը իքի թարաֆ պէյնիտէ իթիւպի հասըլ իտուպ տէ Միքայիլ: Լովսքի գօմիթէ ըշիսի վէ Ջօնչէվ վէ Սարաֆով ըշիս մուպիլի թալիս էլլէմէք իշիւն: Փագաթ մէպտէն հէքտիկերին մուխալիֆ օլան հէր իքի թարաֆըն բրօկրամը թաթպիգ իտիլէմէտի, վէ քէզա շիրքէթլըրին գօնկրէյէ տախիլի շիմտիքի մէքէզի գօմիթէսի թաւաֆընտան գապուլ օլընմատը:

«Պու իքի գօնկրէյէրին թապիլի իքի մէքէզի գօմիթէսի պուլընաճագ: պիրի շիմտիքի գօմիթէքի պուլըն ըշիսի ժէնէրալ Ջօնչէվ օլաճագ տրը: տիկերի էսքի վէ մարուֆ գօմիթէքի պուլըն ըշիսի Սարաֆովըն հէրինէ միւհէնտիս Սթանիլէֆ օլաճագ տրը:

«Սարաֆովս կէլըրէք: պու հէր նէգատար վարնտան ինթիսապ օլընմատը իսէտէ ֆիլիպտէն մուրախա կէօնտէրիտի Գօնկրէյէ: Գէնտի խասիմի, ժէնէրալ Ջօնչէվ, Սարաֆովըն 250000 ֆրանզ պիլա միւսատէ սարֆ ու թէկէֆ իթմիշ օլտըղընը պէլան իթտի:

«Բրէնս ֆերտիւնան չու սաաթլարտա ափտէթ իտէկէք տիր: Բէյիս Մ. Տանէվ պիլա թէկէսի պիր տէֆա տահա Պէլլիտտա կիտէճէք Պուլկարիս վէ Սէրպիս պէյնիտէ միւնասէպտիթ տօսթանէի պօվիլէշտիլմէք վէ Սըրպ հիւքիւմէթի նի Գուրթարընը Ջարըն նամընա Սօփիատա իճրա օլընաճագ զիշ: նէթ միւնասիպէթի իլէ՝ ըտմէն Սօփիայա տալէթ իթմէք իշիւն»:

ՏԱԽԻԼԻՅԷ

Եարըն պէլէտիլէ մէճիս ազալարընը վէ մէքթէպ հոգաբօրճուլարըն ինթիսապաթը իճրա օլընաճագ տրը:

Հիւքիւմէթէ գարըն օլան նաբօտնագ վէ Տիմօգրատ ֆըրգալարը պիրէշմիշ օլուպ, միւլէթտաշարըմըտան Մ. Մատաթիա Սուքիասեանը պէլէտիլէ ազալինթիսապ իտէճէքլէր: Հիւքիւմէթ թարաֆտարարը իսէ միլլէթին արդուսընը սիւալ իթմէլըրինտէ թաղականլարտան իքի մարուֆ շախս Մ. Ստեփան հաճի թոլմասեանը գաւտիտա կէօսթէրմիշլէր: Փագաթ ումուճ միլլէթ էֆրատը անը միւնասիպ կէօրմէյուպ, ես Մ. Յակոբ թոսպըլըգեանը վէ եսթօտ Մուրատ էֆ. հաճի Սարգիսեանը նասպ իթմէք արգուսընտա տըրլար:

— Հոգաբարճու ինթիսապը իշիւն իսէ աթիտէքի պէշ զէվաթ միւնասիպ կէօրիւմիշ տիր:

- Մ. Յակոբ թոսպըլըգեան
- » Կարապետ Սուլթանեան
- » Փիլիպպոս Հալաճեան
- » Յարութիւն Հաճօլեան
- » Գալուստ Աւագեան

Պիզ պու զաթլարը թալսիլէ իթմէքտէն զիյատէ, հէրլի միլլէթտաշարըմըն հէր հալտէ ըշի կէօթիւրմէլըրին իգթիզաընը անլաթմագ իսթէրիզ: Պու տէֆապիլտէն պարի 200 ըշի կէօրիւն: մէլի տիր քի միլլէթին տիկեր միլլէթլէր էնտիւնտէ էհէմիլլէթի պէլան օլընսըն: Պու նօգթատա վաղաֆէսիլըք տուկուսըլըք տէմէք տիր:

— Պիր ըիվայէթէ կէօրէ Պուլկար հիւքիւմէթի Մաքէթոնիա գօմիթէլըր լաղվ իտէճէք իմիշ: Փագաթ զանն իթմէլըն:

— Սարաֆովըն թարաֆտարը օլան գօնկրէ իքինէի պիր մէքէզի-գօմիթէ ինթիսապ իթմիշ վէ Սթանիլէֆ ըշիս նասպ էլլէմիշ տիր: Գօնկրէ գաբանտը:

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Ահէմ Շահը Լօնտրայա եթիշուպ, Բրէնս տը կալտան սթափօնտա գապուլ օլընտը: Քէզա Գրալ Լուուարտա վէքեալէթէն Բրէնս Շահա զիյաֆէթ քէշիտէ իթտի:

— Պօր մէնէրալար Օգոստոս 18 տէ Լօնտրայան չէքիլուպ, հօլանտայա կիթտիլէր: Լահէյտէ էհալի անլէրի ալըրշարլէ գապուլ իթտի: Պօթա պէյանը թէշէքիլլէ տէտի «Շիմտիլըք գալպի միլլէթ օլաշը սէօլլէյէմէյիզ, ֆագաթ եագընտա ալէնէն պէյան իտէճէկիզ»: Ժէնէրալար Բօթէրտամտա ֆրիւկէր վէ Շթէյն ըշիսլըր իլէ կէօրիւշտիլէր:

ՖՐԱՆՍԱ

Հիւքիւմէթ մէմուրարը ճէպրէնրահիպէ մէքթէպլըրին գաբայաճագլարը էնտտէ պաղը չէհիլլէրտէ քէօլլիւ էհալի իլէ ճէնկլէշմէյէ մէպուր օլուշ վէ պուսէպէպլէ կիշէն կիւն 27 ըշի ես: րէլէնմիշ տիր:

— Շիմտի պիլթիւն Ֆրանսատա ըհիպէ մէքթէպլըրի գաբանմը պիթմիշ օլուպ, մէմալիքին ըք չօգ թարաֆլարընտան պէլէտիլէ հէյէթլըրի վիւքէլա ըշիսի Մ. Գօմպա թէշէքիլլէթ պէյան իթմէքտէ տիրլէր:

Պուլտան սօնրա հիւքիւմէթ մէքլըր մէքթէպլըրի կիթմէքտէ օլան գըղլարը եթրէշտիլմէք իշիւն պիրազ զօր չէքէճէք տիր, զիրա հիւքիւմէթ մէքթէպլըրինտէ ալըք եթր եօզ ըմիշ, հէր հալտէ հէնի մէքթէպլըր աշմագ իգթիզա իտէճէք:

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

Ալմանիանըն հէր թարաֆընտա շիտտէլիլի ֆուրթիւնա զուհուրա կէլմիշ օլուպ, տաղըղլարտա գար եագմագտա օլտըղը Օգոստոս 18 թարիլէ Պէրլինտէն պա թէկէկրաֆ պիտիլըիլիօր:

— Նիւ-Եօքտան պիր թէկէկրաֆ հալանըն ըք սօվուգ օլտըղընը վէ թէպտիլի հալա իշիւն քէօլլէրէ կիթմիշ օլանլարըն չէհիլլէ ալտէթ իթտիլըրին պիտիլիօր: Օգոստոստա պու տէրէճէ սօվուգ ասլա վուգու պուլմալը:

— Եօքահամտան պիտիլըիլի կիւն պիւնէն, զէրլէլէ սէպէպի իլէ թօրիշիմա ատասը պիլթիւն պիլթիւնէ զայա օլմուշ (սույա պաթմըշ), վէ 200 ըշի Վօլմիշ օլտըղընը Լօնտրայան թէկէկրաֆ պիտիլըիլի:

— Մըսըրտա գըրգ հէրտէ գօլէլա պաշ կէօսթէրմիշ օլուպ, Բու:

լիս 15 ինտէն պէրու գօրէլայա թուլթուլմուշ օլանլարըն մէճմուի 2238 ըշի օլմաղլէ, պուլարտան 1696 սը էօլմիշ տրը: Փագաթ պու էօլէնլէրտէն ըք աղը Լվորալը տըրլար:

— Ջուիցերիա հիւքիւմէթի մէքլիլէսի օպիր րուհպան շիրքէթլէրին մէմալիքտէն իխրաճ օլընմալարընը թահթը գարարա ալալազ, անլէրէ 90 կիւն վատէ վէրտի ըի՝ պու միւտտէթ վարֆընտա իշլէրինի թասվիլէ իտուպ կիթմիլէր:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 10 Օգոստոս	
ՋԱԽԻՐԷ	
ՊՈՒՀՏԱՅ	ԵՆՆԻ ՍԱԼԷՐ
Վալօն Լիպ. 57-58 հքթ. 8.50/ 8.60	
Արապալիպ. 53-62 հքթ. 7.20/ 10.20	
ԱՐԲԱ,	
Վալօն 100 քիլօ	9.20/ 9.40
Արապա 45-50 լիպ. հքթ. 5.70/ 6.20	
ՋԱՎՏԱՐ	
7.- / 7.20	
ՐԱՔԻՑԱ, 100 քիլօսը	19.50/ 19.60
Կիւնտէ 350-400 արապա կէլմէքտէ տիր:	
Վալօն մուամէլէսի ալթուս ֆըրանլէր, արապա կիւմիլլէ: Նարօլէօն 21 ֆրանը:	

ՍԱՐԻԱՖԻՅԷ

Նարոլէօն 20.80 ֆրանը
Օսմ. լիւրաք 22.90 ալթուս ֆրանը

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

Յառաջիկայ չորեքշաբթի գիշեր պիտի ներկայացուի, «Վէսէլլօ» Հայ դերասանական խմբին կողմէ ի նպաստ Տէր եւ Տիկին Յակոբեանի, ԿԱՌՄԻՐ ԹԻՐԱՊԱՆԱԿԸ 6 արաբ: Էլէնի դերը Տիկին Յակոբեան պիտի կատարէ:

Խիտ ծիծաղաշարժ գաւաշտ մը Պ. Ա. Պէնիանի կողմէ:

ԵՐԳ «Մայր Արաքսի» եւ «Ով Երծեռնակ» նաեւ ՊԱՐ:

Կարծէք քաջալերել այս դերասան աւուր, որ թատերական ընմին վրայ հետզհետէ պատուաբեր տեղ մը կուգայ գրաւել:

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱՔՈՒ

«Վառիլէթ» դերասանական խումբը յառաջիկայ չորեքշաբթի գիշեր առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ ի նպաստ Պ. Պ. Ստավրօ Վուչիւնայի, Եօրկի Տալէլլիի, Կարապետ Պալճեանի, Արմենակ Թէրզեանի եւ Թորգոմի «Գաթերին Հովուարդ» բանաստեղծի 7 արար 12 պատկեր եւ զարգարուն տեսարան:

«Գիւղական Հարսանիք» տրամ գօմէտի հարար:

Երգեր եւ պարեր:

Վառիլէթ խումբ



Նիլէ կուգէք հագնիլ կօշիկներ ուրոնք իրենց վրայ միացուեն ձեռի իւղիմայիկուսութեան կատարելութիւն եւ մանաւանդ գինի լափաւորութիւն, առանց վարանելու գիւնեք Ս. Խօրասանեանի: Մուսալա, Տօքթ. Պասանովիչի տանը գիմաջ:

Одговорникъ Н. Драгулевъ
Пет. на Хр. Н. Войниковъ—Варна